

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 146

**Ենթակայական փրկարանութիւն** – Թէպէտ Քրիստոսի փրկութեան գործի առարկայական մասը աւարտուեց խաչի վրայ (Յովհաննէս 19:30), ուր գլխատր կենդրոնացումը Հայր Աստուծն էր՝ մատուցանելով կատարեալ յագեցում Նրան (Յովհաննէս 4:34, Եբրայեցիս 2:17), սակայն այդ չի նշանակում թէ փրկութեան գործի բոլոր մասերը լրացած էին: Պարզապէս Քրիստոսի գործը ունի գործադրութիւն մեղաւորների համար, քանի որ Նա աշխարհ եկաւ մեղաւորներ փրկելու (Ա. Տիմոթէոս 1:15): Միայն երբ Քրիստոսի առարկայական գործը մատակարարուում է մեղաւորներին, ապա այն ժամանակ տեղի կունենայ փոփոխութիւն իրենց կեանքերում (Եփեսացիս 1:13): Փրկութեան գործի այս յատկութիւնը մարդուց ներքին է: Աստուածաբաններ ակնարկում են այս որպէս ենթակայական փրկարանութիւն՝ ենթակայական մատակարարումը կամ Քրիստոսի արժանիքների հաղորդակցութիւնը մեղաւորներին:

Ինչպէս նշուեց Երրորդութեան վարդապետութեան դասում, թէպէտ Երրորդութեան իւրաքանչիւր անձ միասնաբար մասնակից է գործունեայ է Աստուծային բոլոր արտաքին արարքների մէջ, սակայն Նրանք գործունեայ են տարբեր կերպերով, կատարելով Իրենց յատուկ արարքները այդ գործունէութեան մէջ: Աստուծաշունչը վերագրում է արարքներից որոշը աւելի մասնաւորապէս մէկ անձին, եւ որոշ արարքները Երրորդութեան միւս անձերին: Օրինակի համար, փրկութեան գործի մէջ Հայր Աստուծը ծրագրեց փրկութիւնը եւ աշխարհ ուղարկեց Իր Որդուն Իր ժողովրդին փրկելու համար (Յովհաննէս 3:16, Գաղատացիս 4:4). Որդի Աստուծը եկաւ եւ կատարելագործեց փրկանաւորութիւնը Իր ժողովրդի համար (Յովհաննէս 4:34, 6:38, 17:4). եւ Հոգի Աստուծը մատակարարում է փրկութիւն մեղաւորներին (Յովհաննէս 3:5-8, Բ. Թեսաղոնիկեցիս 2:13, Ա. Պետրոս 1:1-2): Այս բոլորը փրկանաւորութեան ուխտի մաս ու բաժինն են՝ հաստատուած Աստուծութեան անդամների միջեւ: Սուրբ Գիրքը յատկապէս վերագրում է Քրիստոսի փրկութեան գործի մատակարարումը Սուրբ Հոգու յատուկ գործին՝ որը յանձն առնում է մատակարարել Քրիստոսով գնուած փրկանաւորութիւնը դրանց որոնց համար այդ մտադրուած էր (Ա. Կորնթացիս 6:11, Տիտոս 3:4-7):

**Սուրբ Հոգու գործունէութիւնները** – Որպէս պատշաճ կերպով հասկանալ այս փրկանաւորութեան գործը, կարելու է նախ նկատի առնել ստեղծագործութեան մէջ ու նաեւ հաւատացեալների կեանքերի մէջ եղած Սուրբ Հոգու գործի տարբեր կերպերը: Հին Կտակարանը բացատրում է Սուրբ Հոգուն որպէս գործունեայ ստեղծագործութեան գործումը, բերելով կարգ անկարգ տիեզերքին (Ծննդոց 1:2, Սաղմոս 33:6). որպէս բոլոր ստեղծագործութեան մէջ եղած կեանքի ակը, զօրութիւնը եւ շարունակութիւնը (Յոբ 33:4, Սաղմոս 104:29-30). ցուցադրելով Աստուծոյ ներկայութիւնը ստեղծագործութեան մէջ (Սաղմոս 139:7). զօրացնելով որոշ մարդկանց ծառայութեան համար (Ելից 35:30-33, Թուոց 11:24-45, Դատաւորաց 3:10, Ա. Թագաւորաց 16:13). պաշտպանելով Աստուծոյ ժողովրդին իրենց թշնամիներից (Եսայիա 63:11-12, Անգէ 2:5). հաղորդելով իմաստութիւն եւ տալով յայտնութիւն մարգարէներին (Նեեմիա 9:20, 30, Բ. Թագաւորաց 23:1-2, Միքիա 3:8, Զաքարիա 7:12, Գործք Առաքելոց 1:16, 28:25, Ա. Պետրոս 1:10-11). եւ յառաջացնելով ներքին նորոգում հաւատացեալների մէջ (Սաղմոս 51:10-12, Եզեկիէ 36:25-27):

Նոյնը ճիշտ է Սուրբ Հոգու գործի նկատմամբ Նոր Կտակարանում, թէպէտ այն յայտնուած է աւելի մանրամասնութեամբ եւ յատկութեամբ, եւ շատ աւելի չափով ու տարածութեամբ Աստուծոյ ժողովրդի մէջ: Սուրբ Հոգին ներշնչեց առաքեալներին որպէսզի գրի առնեն Նոր Կտակարանի գրքերը (Յովհաննէս 16:13, Եփեսացիս 3:5, Բ. Պետրոս 1:21). շնորհեց իմաստութիւն եւ ուղղութիւն առաքեալներին եւ ուրիշ վաղ հաւատացեալներին ծառայութեան համար եւ աւետիսը հռչակելու համար. եւ կարողացրեց ու զօրացրեց դրանց կատարելու մեծ նշաններ եւ հրաշքներ (Մարկոս 13:11, Յովհաննէս 14:26, Գործք Առաքելոց 1:8, 2:4, 4:8, 6:3, 8:29, 39-40, 11:12, 28, 13:2-4, 9-11, 15:28, 16:6-7, 20:22-23, 21:11, Հռովմայեցիս 15:19, Ա. Կորնթացիս 2:4, Գաղատացիս 3:5, Ա. Թեսաղոնիկեցիս 1:5, Ա. Տիմոթէոս 4:1, Եբրայեցիս 2:4, Ա. Պետրոս 1:12):

Կարդում ենք որ Սուրբ Հոգին վերածնում եւ նորոգում է հաւատացեալներին (Յովհաննէս 3:5-8, 6:63, Տիտոս 3:4-7). Նա լուսաւորում եւ ուղղում է նրանց (Հռովմայեցիս 8:4, 14, Ա. Կորնթացիս 2:12-16, Գաղատացիս 5:16-18, 25). լցնում է նրանց սէրով, ցնծութեամբ, խաղաղութեամբ եւ մխիթարութեամբ (Գործք Առաքելոց 9:31, Հռովմայեցիս 5:5, 14:17, Ա. Թեսաղոնիկեցիս 1:6). սրբացնում է նրանց, մշակելով սուրբ կեանքի պտուղը նրանց մէջ (Հռովմայեցիս 8:13, Բ. Կորնթացիս 3:18, Գաղատացիս 5:22-23). բարեխօսում է նրանց համար (Հռովմայեցիս 8:26-27). եւ զօրացնում ու տալիս է նրանց հոգեւոր պարգէներ ծառայութեան համար (Ա. Կորնթացիս 12):

Սուրբ Հոգու ոչ բոլոր գործերը վերաբերում են փրկանաւորութեան գործին: Ուստի աստուածաբաններ զանազանում են Սուրբ Հոգու ընդհանուր եւ յատուկ գործունէութիւնների միջեւ: Սրանց վերաբերեալ Լուիս Բրըքհաֆը գրում է թէ՛ «(Ստեղծագործութեան շրջանում) Նա գոյացնում, պահպանում, զարգացնում եւ ուղղում է բնական ստեղծագործութեան կեանքը ... (փրկանաւորութեան կամ վերաստեղծութեան շրջանում) Նա գոյացնում, պահպանում, զարգացնում եւ ուղղում է նոր կեանքը որը ծնւում է վերից, սնւում է վերից, եւ կկատարելագործի վերումը»: Յաջորդ դասում կ'նկատենք սերտել փրկութեան կարգը, եւ պարունակուած տարբեր մասնիկները թէ Աստուած ինչպէս է մատակարարում փրկութիւն անհատներին: